ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ №9 1969

ՕՆՆԻԿ ԵԳԱՆՅԱՆ

ՏԱԹԵՎԻ ԳՐԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Տաթևի վանական հաստատությունը ո՛չ միայն պատմական Սյունյաց աշխարհի հոգևոր վարչության կենտրոնն է եղել, այլև այնտեղ ծավալված կրթական ու մշակութային գործունեության սիրտը, որը մերթ ուժգին և մերթ թույլ, բայց միշտ բաբախել է, սկսած իր հիմնադրման օրից (X դար) ընդհուպ մինչև XIX դարի կեսերը։

Մշակութային այդ կենտրոնը, որը վանական պարզ դպրոցից աճելով՝ XIV և XV դարերում բարձրանում է համալսարանի աստիճանի, տվել է այնպիսի ականավոր ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Հովհ. Որոտնեցին, Գր. Տաթևացին, Մատթեոս Ջուղայեցին և Առ. Սյունեցին, որոնց իմաստասիրական, աստվածաբանական և գեղարվեստական գործերը միջնադարյան հայ մատենագրության մեջ ամենապատվավոր տեղերից մեկն են գրավում։

Տաթևի վանական դպրոցն ունեցել է նաև իր գրատունը, ուր դեռևս XII դարի երրորդ քառորդում կենտրոնացված էին հազարավոր մատյաններ։ Պատմիչ Ստ. Օրբելյանը, խոսելով սելջուկների կողմից Բաղաբերդ ամրոցում 1171 թվականին ավարի ենթարկված վանքապատկան արժեքների մասին, հիշատակում է նաև Տաթևի գրատան ձեռագրերը՝ «թուով աւելի քան զտասն հազար»[1]։

Այնուհետև այդ գրատան ձեռագրերի քանակի մասին մինչև անցյալ դարի 60-ական թվականները հավաստի տեղեկություններ չեն պահպանվել։ XIV—XV դարերում, երբ Տաթևի դպրոցն իր ծաղկումն էր ապրում, ոչ միայն որպես կրթական կենտրոն, այլև որպես գրչության արվեստի բազմաբեղուն օջախ, անշուշտ, պետք է ունեցած լինի նաև իր հարուստ մատենադարանը։

Եթե այսօր, փաստական տվյալների բացակայության պատճառով, չենք կարող այդ գրատան մատյանների թվական քանակի մասին դատողություններ անել, ապա այդտեղ եղած և հետագա ընդօրինակողների համար նախագաղափար հանդիսացած ձեռագրերի բովանդակության մասին մեզ որոշակի գաղափար կարող են տալ XIV—XVIII դարերում Տաթևի վանքում ընդօրինակված և մեզ հասած այն 109 ձեռագրերը[2], որոնք հատկապես աչքի են ընկնում իրենց բովանդակած իմաստասիրական, կրոնա-դավանաբանական և կանոնական նյութերի բազմազանությամբ։

---

1 Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 336։

2 Արտաշես Մաթևոսյան, Գրչության վայրերի քարտարան (անտիպ)։ Տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, Քարտարան № 3։